Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

4 (1403) • 1 փետրվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

02 Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am



# Ընդլայնված կոլեգիայի նիստ



Հունվարի 26-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության ընդլայնված կոլեգիայի նիստը, որի ընթացքում ամփոփվեցին ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2018 թվականի օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները:

Կոլեգիայի նիստին մասնակցում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նիստը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, կենտրոնական ապարատի, մարզային եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ:



Ընդլայնված կոլեգիայի նիստում ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2018թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկույցով հանդես եկավ ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Անդրադառնալով նախորդ տարվա գործունեությանը՝ ոստիկանության պետը նշեց, որ ունենալով ներքաղաքական գործընթացներով պայմանավորված ծանրաբեռնված օրակարգ՝ ոստիկանությունն ընդհանուր առմամբ կատարել է իր առաջ դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը: Տարին հագեցած էր մի շարք համապետական նշանակություն ունեցող միջոցառումներով, ինչպիսիք էին՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթնաժողովը, Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման 100-ամյակի եւ Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումները, ինչպես եւ ՀՀ ԱԺ արտահերթ, Երեւանի ավագանու եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որոնց պատշաճ կազմակերպումն ու անցկացումը պայմանավորված էր նաեւ ոստիկանության մեծաքանակ ծառայողների եւ միջոցների ներգրավվածությամբ:

էջ 2

# Ընդունելություն ոստիկանությունում



Հունվարի 30-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց Կանադայի Օնտարիո նահանգի հանրային-համայնքային անվտանգության նախկին փոխնախարար, ներկայումս Տորոնտոյի Մանքի համընդհանուր հարաբերությունների եւ հանրային քաղաքականության դպրոցի ոստիկանական նախաձեռնությունների ղեկավար, մեր հայրենակից Մեթյու Թորիգյանին:

Մեթյու Թորիգյանը ներկայացրեց տարբեր երկրների իրավապահ կառույցների մասնակցությամբ իրենց ծրագրերն ու նախաձեռնությունները: Հերթականը նախատեսվում է շուտով կյանքի կոչել, որին կմասնակցեն Հայաստանի իրավապահ կառույցները: Ծրագիրը կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու, ինչպես եւ համայնքային ոստիկանության զարգացման նպատակներ է հետապնդում:

Վալերիյ Օսիպյանը ոչ միայն համագործակցության, այլեւ աջակցության պատրաստակամություն հայտնեց: Նա տեղեկացրեց, որ Հայաստանում համակարգային եւ տեւական պայքար է սկսվել կոռուպցիոն երեւույթների դեմ, ուստի անչափ կարեւորում է կոռուպցիայի դեմ մասնագիտացված ու պրոֆեսիոնալ գործողությունները: Ներկայացրեց նաեւ համայնքային ոստիկանության զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները՝ կարեւորելով թաղամասերում համայնքային ոստիկանության հենակետերի առկայությունն ու համայնքային ոստիկան-քաղաքացի կապի ամրապնդումը:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ ներկայացված խնդիրներին առնչվող այլ հարցեր:

# Հանդիպում լրագրողների հետ

Հունվարի 30-ին ոստիկանությունում տեղի ունեցավ մամուլի ասուլիս:

Ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Ղուկասյանն ու ՀԿԼ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Աշոտ Ահարոնյանը ներկայացրին ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2018 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները:



Նշվեց, որ, չնայած ներքաղաքական գործընթացներով պայմանավորված ծանրաբեռնված օրակարգին, ոստիկանությունն, ընդհանուր առմամբ, կատարել է իր առաջ դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում իրականացված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է հանրապետության օպերատիվ իրավիճակը: Հանցավորության ընդհանուր կառուցվածքում նվազել է մարդու, հասարակական կարգի ու անվտանգության, բնակչության առողջության, պետական իշխանության, ծառայության ու կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշիռը: Աճել է սեփականության եւ որոշակիորեն նաեւ՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների մասնաբաժինը՝ նշեցին բանախոսները:

Մամուլի ասուլիսի ավարտին լրագրողների հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

# Ավազակությունը բացահայտվեց



Հունվարի 27-ի գիշերը, ժամը 3-ի սահմաններում, ոստիկանության Մարաշի բաժանմունքում ավազակային հարձակման վերաբերյալ ահազանգ ստացվեց: Անհայտ անձը հարձակվել էր Ալեք Մանուկյան փողոցի բուքմեյքերական գրասենյակի 55-ամյա աշխատակցուհու վրա, դրամարկղից հափշտակել էր 800 հազար դրամ ու փախուստի դիմել:

Կինը բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց: Մեկնած ոստիկաններին բժիշկը տեղեկացրեց, որ նա ի վիճակի չէ հաղորդում տալու:

Հարուցվեց քրեական գործ:

Ձեռնարկվեցին ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Ոստիկանների տեսադաշտում կասկածյալ հայտնվեց:

Ոստիկանության մի քանի ստորաբաժանման ծառայողների համագործակցության արդյունքում հունվարի 30-ի առավոտյան մայրաքաղաքի Շիրակի փողոցում կասկածվող անձը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Մարաշի բաժանմունք:

Երեւանի բնակիչ, 27-ամյա Արտակ Աբրահամյանն էր: Նրա բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվեց հափշտակված գումարի մի մասը:

Արտակ Աբրահամյանը կալանավորվել է:

# Կացնով բանկ մտած տղամարդը վնասազերծվեց



Հունվարի 29-ին, ժամը 13.50-ի սահմաններում, ոստիկանության Արաբկիրի բաժին ահազանգ ստացվեց, որ VTB բանկի Բաղրամյան պողոտայի մասնաճյուղ կացնով մարդ է մտել: Մասնաճյուղում ծառայություն իրականացնող ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ոստիկանը վնասազերծել է այդ տղամարդուն, որը դեպքի վայր ժամանած ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների կողմից բերման է ենթարկվել:

Ոստիկանության Արաբկիրի բաժին կասկածանքով բերման ենթարկված 33-ամյա Հրաչիկ Ումուրշատյանը կալանավորվել է:

Հարուցվել է քրեական գործ:

Համակարգ

# Ընդլայնված կոլեգիայի նիստ ոստիկանությունում

Սկիզբը` էջ 1

Ներկայացնելով հանրապետությունում արձանագրված հանցագործությունների շարժընթացը` Վալերիյ Օսիպյանը նկատեց, որ 2018 թվականին հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11, 2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սեփականության դեմ ուղղված եւ առավել լատենտային համարվող` կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թվի աճով, նաեւ այն հանգամանքով, որ բարձրացել է քաղաքացիների վստահությունը ոստիկանության գործունեության նկատմամբ, եւ նրանք չեն խուսափում դիմել ոստիկանություն. եթե 2017 թ. ստացվել է 32.321 առերեւույթ հանցագործության մասին հաղորդում, ապա 2018 թ. դրանց թիվն աճել է 28,3%-ով` կազմելով 41.466):







Հանցավորության ընդհանուր կառուցվածքում նվազել է մարդու, հասարակական կարգի ու անվտանգության, բնակչության առողջության, պետական իշխանության, ծառայության ու կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշիռը: Աճել են սեփականության եւ որոշակիորեն նաեւ` տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները:

Առանձնապես ծանր հանցագործությունների թիվն աճել է 36,6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է լատենտային համարվող` առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների իրացման եւ կաշառքի դեպքերի թվի աճով:

Ծանր հանցագործությունների թվի աճը առավելապես պայմանավորված է բնակարանային գողությունների թվի աճով:

Նվազում է արձանագրվել հիմնական հանցատեսակների գծով. 28,6%-ով նվազել է սպանության, 8,1%-ով` դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, 17,6%-ով` սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված, 23,9%-ով` համակարգչային տեխնիկայի միջոցով կատարված հափշտակության դեպքերի թիվը: Միեւնույն ժամանակ, 10,4%-ով նվազել է խմբերի, ինչպես եւ անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը. 2018թ. հանցագործություն է կատարել 324 անչափահաս` 2017 թ. 341-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննվող քրեական գործերով (նյութերով) անցնող 26.781 հանցագործության դեպքերից` 62,9%-ով առկա է որպես մեղադրյալ ներգրավված անձ, ծանր` 4633 հանցագործություններով` 38,0%, առանձնապես ծանր` 313 հանցագործություններով` 59,7%:

Ըստ առանձին հանցատեսակների` բացահայտման աշխատանքների արդյունավետության պատկերը հետեւյալն է. սպանություններով` 74,6%, ավազակություններով` 66,7%, տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերով` 93,4%, սպանության փորձերով` 74,4%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերով` 87,0%, այդ թվում` ծանր 71,2%, բռնաբարության ու բռնաբարության փորձի` 72,7%, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման` 88,9%, այդ թվում` մահվան ելքով` 73,0%, խուլիգանության` 59,2%, կողոպուտներով` 57,1%, գողություններով` 39,6%, այդ թվում` բնակարանային` 20,6%, խարդախություններով` 66,0%, յուրացման կամ վատնման դեպքերով` 61,8% եւ այլն: 499-ով աճել է նախկին տարիներին կասեցված քրեական գործերով հանցագործությունների բացահայտման աշխատանքների արդյունավետությունը:

Առանձնահատուկ է իրավիճակը կոռուպցիայի դեմ մղվող պայքարում: Իրականացված լայնածավալ աշխատանքների արդյունքում, օրվա հրամայական դարձած կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հայտնաբերման աշխատանքներում աննախադեպ աճ է գրանցվել. եթե 2017թ. արձանագրվել էր կոռուպցիոն բնույթի 634 դեպք, ապա 2018 թ. դրանց թիվն աճել է մոտ 2,5 անգամ կամ 719-ով, կազմելով` 1353: Հայտնաբերված դեպքերից 760-ը կամ 56,2%-ը հայտնաբերվել է ոստիկանության կողմից: Կոռուպցիոն հանցագործություններից 461-ը կաշառակերության դեպքեր են, 263-ը` պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացման, 137-ը` պաշտոնեական կեղծիքի, 165-ը` պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, 75-ը` պաշտոնեական լիազորություններն անցնելու եւ այլն:

Անդրադառնալով հասարակական կարգի ապահովման խնդրին` Վալերիյ Օսիպյանը, ի թիվս մյուս ստորաբաժանումների, կարեւորեց Ոստիկանության զորքերի դերակատարությունը, որի ուժերով եւ միջոցներով 2018 թ. օգոստոսից իրականացվում է նաեւ ՀՀ պետական սահմանի պահպանություն` մարտական հերթապահություն:

Խոսելով հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման եւ ոստիկանության հանդեպ քաղաքացու աննախադեպ վստահության մասին` ոստիկանության պետը նշեց, որ կառույցի ղեկավարությունը խիստ կարեւորում է յուրաքանչյուր ծառայողի կողմից օրինականության պահպանման խնդիրը, իսկ օրինախախտները պատժվում են: Մասնավորապես, 2018թ. ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ կատարվել է 1712 ծառայողական քննություն, ինչի արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 843 ծառայող:

Ամփոփելով նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքները` ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը հույս հայտնեց, որ 2019 թվականին ոստիկանության ծառայություններն ու տարածքային մարմինները կշարունակեն հետեւողական աշխատանքը` ոստիկանության առջեւ դրված խնդիրների պատշաճ իրականացման, հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու, կատարողական եւ ծառայողական կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ:

Ոստիկանության ընդլայնված կոլեգիայի նիստում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Կոլեգիայի նիստում զեկույցով հանդես եկավ ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանը` անդրադառնալով հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին, ոլորտի խնդիրներին ու դրանց լուծման ուղղություններին:

Իրենց կողմից համակարգվող ոլորտների ու ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հաշվետվություններով, աշխատանքի արդյունքների վերլուծությամբ եւ առարկայական առաջարկներով հանդես եկան ոստիկանության պետի տեղակալներն ու ոստիկանության շտաբի պետը:

Ամփոփելով կոլեգիայի նիստը` ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն անդրադարձավ հաշվետու զեկույցներում բարձրացված խնդիրներին եւ նշելով դրանց լուծման ուղիները` ընդհանուր առմամբ դրական գնահատեց ծառայության մեջ աչքի ընկած ստորաբաժանումների աշխատանքի արդյունքներն ու տվեց համապատասխան հանձնարարականներ:

Ոստիկանության կոլեգիայի նիստի ավարտին պարգեւատրվեցին ոստիկանության հատուկ հանձնաժողովի որոշումով 2018 թվականի օպերատիվ-ծառայողական գործունեության մեջ լավագույնը ճանաչված բաժինները:

Լավագույնի կոչման ու պարգեւների արժանացան նաեւ համակարգի տարբեր ստորաբաժանումների ծառայողներ:

## Կրակոցներ եւ սպանություն



Հունվարի 29-ին, ժամը 1.30-ի սահմաններում, հիվանդանոցից ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգ ստացվեց, որ հրազենային վնասվածքներով իրենց մոտ են տեղափոխվել յոթ անձինք, որոնցից մեկը` մահացած: Աբովյանի բնակիչ, 30-ամյա Արտաշես Գեւորգյանը սպանվել էր:

Օպերատիվ-քննչական խմբերը պարզեցին, որ տղամարդիկ հիվանդանոց էին տեղափոխվել Աբովյանի ռեստորանային համալիրներից մեկից: Ձեռնարկված միջոցառումներով պարզվեց, որ ռեստորանում վեճ էր եղել, հնչել էին կրակոցներ: Տարածքի զննությամբ հայտնաբերվեցին արնանման հետքեր, պարկուճներ եւ այլն:

Քրեական գործ է հարուցվել: Կան ձերբակալվածներ: Ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական քննչական գործողություններ կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

## Հայտնաբերվեց ավազակության մասնակիցը



Նոյեմբերի 29-ի գիշերը երկու դիմակավոր ինքնաձիգով մտել էին Արմավիրի մարզի Ջարթոնք գյուղի մի բնակչի տուն, բայց տանտերերը դիմադրել էին, բռնել նրանցից մեկին, մյուսը, որ ինքնաձիգով էր, փախել էր:

Բռնված անձը արմավիրցի Կարեն Ազիզյանն էր: Նա դեպքի վայրից բերման էր ենթարկվել ոստիկանության Մեծամորի բաժին: Նրա տան խուզարկությամբ հայտնաբերվեցին «ԱԿՄ» ինքնաձիգի փամփշտատուփ` 18 փամփուշտով, դիմակներ, գլխարկ, ձեռնոց, էլեկտրաշոկ մահակ, կպչուն ժապավեն, կապիչներ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվեց, որ փախուստի դիմածը Արմավիրի բնակիչ Օմար Ազմանյանն է, որը հունվարի 20-ին հայտնաբերվեց Բագրատաշենի սահմանային անցակետում:

Նախաքննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

## Ավազակություն Մեղրաձորում



Հունվարի 4-ի գիշերը ոստիկանության Հրազդանի բաժնում հաղորդում ստացվեց, որ Մեղրաձոր գյուղի մի բնակչուհու դանակով սպառնացել են եւ թալանել: Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ ժամը 22.00-ի սահմաններում դիմակավորված երկու անձ մտել են 82-ամյա կնոջ տուն եւ դանակի սպառնալիքով հափշտակել փող ու ոսկյա զարդեր:

Հունվարի 24-ին ոստիկանության Կոտայքի մարզային վարչության եւ Հրազդանի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, Կոտայքի մարզային քննչական վարչության աշխատակիցների հետ պարզեցին, որ տարեց կնոջ նկատմամբ ավազակային հարձակում են կատարել հրազդանցիներ Դավիթ Փալանջյանը եւ Սահակ Խաչատրյանը: Նրանք Հրազդանի Միկրոշրջան թաղամասից բերման ենթարկվեցին ոստիկանության Հրազդանի բաժին:

Նախաքննությունը շարունակվում է:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# «Տարածքը տեսահսկվում է»

***Մեկ անգամ չէ, որ տեսահսկող սարքերն օգնել են ոստիկաններին հանցագործություններ բացահայտելիս: Ներկայացվող դեպքում տարածքը տեսահսկող սարքը հանցագործության միակ ականատեսն էր, եւ հանցագործությունը բացահայտելիս մեծապես օժանդակեց քրեական հետախույզներին:***



Գողության ահազանգը ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն դեղատնից էր: Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ գողացել էին հիգիենայի պարագաներ, մանկական կեր, քուսքներ... Տարածքը տեսահսկվում էր: Քրեական հետախույզները առգրավեցին սարքերի տեսագրությունները: Վերծանեցին: Երկու հոգի էին, երկուսի դեմքն էլ «նկարվել էր»:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները պարզեցին «նկարվողներից» մեկի ինքնությունը: Իր վարքագծով ոստիկանության տեսադաշտում բազմիցս հայտնված Արամ Մովսիսյանն էր: Նա հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանություն: Ի դեմս իրեն՝ «ճանաչեց» տեսագրող սարքի «լուսանկարած» տղային: Հայտնեց, որ գողությունն ընկերոջ՝ ոմն Մխոյի հետ է արել, գողոնն էլ, իբր, նա էր իրացնելու: Ինքը պարզապես ընդառաջել էր ընկերոջը, որ պարտքերի մեջ խրված՝ «այլ ելք չի ունեցել»: Գողացել էին, դրանից հետո ինքը Մխոյին չի տեսել:

Հեռուստաեթերով ճանաչման ներկայացված երիտասարդին հայտնաբերելու գործին օգնեց ոչ միայն օպերատիվ ճանապարհով ստացված տեղեկությունը, այլեւ տեսագրող սարքը: Ոմն Մխոն՝ Միքայել Ղուկասյանը, հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց: Խուզարկությամբ նրա տնից հայտնաբերվեց գողոնի չիրացված մասը:

Այսօր գրեթե չկան առեւտրի կետեր, որ կահավորված չլինեն տեսահսկող սարքերով: Գուցե այս հանգամանքն ինչ-որ տեղ թուլացնում է վաճառողների զգոնությունը, բայց չի ազդում գողանալուն հակվածների զգոնության վրա:

Բերենք մի քանի օրինակ:

Նոյեմբերի 13-ին մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ հագուստի սրահում գողացել են իր պայուսակը: Տեսագրության մեջ երեւում էր սայլակի վրայից պայուսակը գողացող կինը: Ճշտվեց նրա ինքնությունը, եւ նա հրավիրվեց ոստիկանություն՝ ներկայացնելով պայուսակը: Կնոջ բացատրությամբ՝ իրեն թվացել էր՝ պայուսակը մոռացել են, ինքն էլ իբր տիրություն էր արել:

Դեկտեմբերի 4-ին ոստիկանները, գողության կասկածանքով, բերման ենթարկեցին 35-ամյա մի տղամարդու: Դեղատան տեսագրող սարքը «նկարել էր», թե ինչպես է գողանում աշխատակցի բջջային հեռախոսը ու արագ հեռանում: Նույն «անհարմար» վիճակի մեջ հայտնվեց նաեւ երիտասարդ մի կին, որ տեսահսկող սարքի աչքի առաջ խանութից գողացել էր օծանելիք, բիժուտերիայի հավաքածու:

Դեկտեմբերի 18-ին 22-ամյա մի օրիորդ չէր դիմացել հավանած կոշիկը գողանալու գայթակղությանը. անտեսել էր տեսախցիկը, մինչդեռ տեսախցիկն իրեն չէր անտեսել:

Նույն օրը մեկ այլ խանութի տեսախցիկ ֆիքսել էր երկու երիտասարդի, որոնք փորձել էին մարզահագուստ գողանալ: Գողոնը բարեհաջող հանել էին խանութից, բայց այդ պահին տեսագրությանը հետեւող անվտանգության աշխատակիցը կանխել էր նրանց հեռանալը. մուտքի մոտից, գողոնով հանդերձ, վերադարձրել էին խանութ:

Տեսահսկող սարքի զգոն աչքից չէր վրիպել նաեւ Վանաձորի սուպերմարկետներից մեկում գողություն կատարող 19-ամյա երիտասարդը: Մուտքի մոտ նրա տոպրակում հայտնաբերվեցին գողացած վերնաշապիկները:

Դեկտեմբերին մայրաքաղաքի մի շարք խանութներից, գրասենյակներից կատարված գողությունների հեղինակներին տարածքի տեսագրող սարքերը գրանցել էին: Կադրերում երեւացող երկու երիտասարդները, այսպես ասած, ծանոթ էին ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզներին: Նախկինում դատապարտվել էին գողության համար: Երկուսն էլ հայտնաբերվեցին ու բերման ենթարկվելուց հետո խոստովանեցին՝ մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում քսանից ավելի գողություն էին արել:

Թեեւ ներկայացված դեպքերը, այսպես ասած, մանր-մունր հանցագործություններ են, հիշեցնենք, որ տեսախցիկները չեն տարբերում ծանր ու թեթեւը, «նկարում են» ամեն ինչ: Օրինակ, հունվարի 21-ին Կոմիտասի պողոտայի վարկային ընկերությունից առանձնապես խոշոր գումար հափշտակած տղամարդուն տեսագրող սարքը ֆիքսել էր, ինչը ծանր հանցագործության բացահայտման բանալիներից էր:

Տեսահսկող սարքերն անթարթ հսկում են նաեւ բանկոմատների տարածքը, բանկերի ու թիրախային այլ օբյեկտների ներսուդուրսը: Մնում է, որ հանցավոր արարք կատարելու գայթակղությունը զսպել չկարողացողները հիշեն, որ այսօր գրեթե ամենուր, ավելի շատ՝ հասարակական վայրերում ամենատես սարքերը անթարթ հսկում են, գրանցում ամեն ինչ...

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Ավազակությունը բացահայտվեց



Հունվարի 17-ին ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգած կինը հայտնել էր, որ տանն իրեն ծեծել են:

Տուժածի տուն մեկնած օպերատիվ խմբի ծառայողները պարզեցին, որ անհայտ անձը խաբեությամբ մուտք է գործել 71-ամյա կնոջ բնակարան, բյուրեղապակյա տարայով խփել է գլխին, հափշտակել մատանին ու դիմել փախուստի:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի (ավազակությունը) հատկանիշներով:

Կոտայքի ոստիկանության եւ քննչական բաժինների ծառայողները, ձեռնարկված օպերատիվ-քննչական միջոցառումներով հիմնավորեցին, որ հանցագործությունը կատարել է Չինչին գյուղի բնակիչ Վարդան Դարբինյանը:

Ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողները, համագործակցելով ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր, Կոտայքի եւ Տավուշի մարզային վարչությունների ծառայողների հետ, Վարդան Դարբինյանին հայտնաբերեցին Տավուշի մարզում եւ բերման ենթարկեցին ոստիկանության Կոտայքի բաժին:

Պարզվեց, որ նախկինում էլ Դարբինյանը Աբովյան եւ Երեւանի քաղաքների տարբեր վարչական շրջաններում խաբեությամբ մուտք է գործել բնակարաններ եւ կատարել գողություններ:

Քննությամբ արդեն բացահայտվել է դրանցից մեկը:

Դեկտեմբերի 25-ին ոստիկանության Կոտայքի բաժին դիմած 80-ամյա կինը հաղորդում էր տվել, որ Աբովյանի քաղաքային շուկայի տարածքում անհայտ անձը, ներկայանալով սոցապ ծառայության աշխատակից, առաջարկել էր օգնություն տրամադրել, եւ իր հրավերով՝ գնացել են տուն: Օգտվելով կնոջ անուշադրությունից՝ նա գողացել է դրամապանակը, որի մեջ եղել էր 300 դոլար, 13 հազար դրամ, այցեքարտեր եւ կոմունալ վճարումների կտրոններ:

Փաստի առթիվ հարուցվել էր քրեական գործ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով պարզվեց, որ սոցիալական ծառայության աշխատակից ներկայացած եւ գողություն կատարած անձը Վարդան Դարբինյանն է:

Վարդան Դարբինյանը կալանավորվել է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

# Խուզարկությամբ թմրամիջոց հայտնաբերվեց

Ոստիկանության ե՛ւ տարածքային, ե՛ւ ապօրինի թմրաշրջանառության դեմ մասնագիտացված պայքար մղող ստորաբաժանումները ամենօրյա աշխատանք են կատարում թմրամիջոցի նույնիսկ ամենափոքր չափաբաժնի ապօրինի շրջանառություն բացահայտելու ուղղությամբ: Բազմիցս անդրադարձել ենք ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի բաժանմունքի բացահայտումներին: Հերթական բացահայտումն արձանագրվեց օրերս:

Հունվարի 18-ին քրեական հետախույզները հերթական օպերատիվ տեղեկությունը ստացան. Հայաստանում մշտական



բնակության վայր չունեցող Միխաիլ Բրուդիանին զբաղվում է ապօրինի թմրաշրջանառությամբ:

Ստացված տեղեկությունները ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները հենց նույն օրը իրացրին՝ համագործակցելով ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզների հետ:

Վրաստանի քաղաքացի Բրուդիանին, որը արդեն մի քանի ամիս Հայաստանում էր, հայտնվեց ոստիկանների օպերատիվ տեսադաշտում: Քրեական հետախույզները նրան հայտնաբերեցին մայրաքաղաքի Դավիթ Անհաղթի փողոցում ու բերման ենթարկեցին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց մետամֆետամին թմրամիջոցի նմանվող բյուրեղանման զանգվածով 6 փաթեթ, կոկաինի նմանվող սպիտակ փոշենման զանգվածով 1 փաթեթ, սփայսի նմանվող զանգվածով 9 փաթեթ եւ 25 սմ երկարությամբ դանակ:

Նշանակվել են փորձաքննություններ:

Միխաիլ Բրուդիանին կալանավորվել է:

Քննությունը շարունակվում է:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Թիրախային մեքենաներ



*Վերջին մեկ ամսվա ընթացքում մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում մեքենաներից գողություններ էին կատարվում: Տուժողներից ոմանք ոստիկանություն էին դիմել, ոմանք՝ ոչ:*

*Թիրախը հիմնականում «Մերսեդես» մակնիշի մեքենաներն էին: Հանցամիտը կողային հայելիներից ու այլ պահեստամասերից զատ, հափշտակում էր հատկապես մեքենաների էլեկտրական կարգավորիչները, որոնք բավական թանկարժեք են, պահանջարկն էլ՝ մեծ:*

*Հունվարի 17-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Հալաբյան փողոցից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին բերման ենթարկեցին Անտառային փողոցի բնակիչ Արա Մկրտչյանին:*

*Նա հայտնեց, որ հունվարի 17-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքում «Մերսեդես» մակնիշի մեքենայից գողացել է շարժիչի համակարգիչ: Նաեւ խոստովանեց, որ հունվարին Երեւանի տարբեր վարչական տարածքներում կատարել է նմանատիպ այլ գողություններ:*

*Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ Արա Մկրտչյանը հունվարի 17-ի գիշերը գողացել է Գոգոլի փողոցի շենքերից մեկի բակում կայանված «Մերսեդես»-ի հոսանքի կարգավորիչը:*

*Կատարվում է քննություն:*

# Գողություն հյուրանոցում



*Հունվարի 7-ին Երեւանի մի բնակչուհի ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում տվեց, որ գիշերն ընկերուհու եւ երկու երիտասարդի հետ գտնվել են Փարաքար գյուղի հյուրանոցում, որտեղ երիտասարդներից մեկը իր բաճկոնի գրպանից փող է գողացել: Տուժողը միայն նրանց անունները գիտեր:*

*Քրեական հետախույզները Փարաքար մեկնեցին: Գրեթե պարզ էր, թե երիտասարդները որտեղից եւ ինչ մեքենայով էին աղջիկների հետ հյուրանոց եկել: Բացահայտման համար առանցքային նշանակություն ունեցան օպերատիվ ճանապարհով ձեռք բերված տվյալները, համաձայն որոնց՝ երիտասարդները Գեղարքունիքի մարզից էին: Ավելի ուշ պարզվեց նաեւ, թե նրանցից ով էր կատարել գողությունը:*

*Հունվարի 11-ին կասկածյալը, որի տվյալները քննության շահերից ելնելով չենք հրապարակում, ներկայացվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին: Նա խոստովանել է կատարածը:*

*Կատարվում է քննություն:*

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

## Անհանգիստ պատանին



*Արթիկ քաղաքի անչափահաս բնակիչ Ալեքսանդր Արշակյանը որոշեց ծննդյան օրն անցկացնել ընկերների հետ: Մորեղբայրը՝ Միերը, համակարգչային խաղերի կենտրոն ուներ, այնտեղ էլ պատրաստվում էր նշել տարեդարձը:*

*Միերը զարմիկի եւ նրա ընկերների համար հաճելի մթնոլորտ էր ստեղծել: Մի քանի ժամով նրանց մենակ թողեց ու տուն գնաց: Երբ վերադարձավ, տղաները բավականաչափ գինովցած էին: Միերի շնորհավորական կենացի ընթացքում Ալեքսանդրի ընկեր Հովհաննեսն անընդհատ խանգարում էր, դուրսուներս անելիս էլ ոտքով էր բացում ու փակում դռները: Մի քանի անգամ Միերը դիտողություն արեց, ապա որոշեց դուրս տանել՝ թարմանալու, նաեւ նրա հետ բացատրական աշխատանք տանելու համար: Սակայն գինովցած պատանու սրտով չէին խրատական խոսքերը, եւ նա դանակով հարվածեց նրան:*

*Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները:*

*Ու մինչ հետաքննություն էր կատարվում, Հովհաննես Ապրեսյանը կրկին խախտեց քրեական օրենսգիրքը, այս անգամ՝ 117 հոդվածը:*

*Այդ օրը փողոցում հանդիպեց Գալստյան եղբայրներին՝ Արսենին եւ Գեւորգին: Խոսքի մեջ Արսենը «այ տղա»-ով դիմեց Հովհաննեսին, ինչը վեճի պատճառ դարձավ: Քաշքշոց սկսվեց: Խփեցին իրար: Գեւորգի միջամտությունն ուշացած էր, քանզի եղբորը պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:*

*Երկու դեպքով էլ տուժողների բողոքների բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:*

## Բռնվեցին գողության համար



Դիլիջանցի Կարեն Միրզոյանը գումարային խնդիրներ ուներ: Երկար մտորումներից հետո որոշեց համաքաղաքացիներից մեկի պահեստարանից գողություն անել: Պահեստարանի դռան կախովի փականը կոտրելով՝ մտավ ու գողացավ զոդման ու երկու էլեկտրական կտրիչ սարքեր:

Ավարը թաքցրեց հարմար վայրում: Սակայն գնորդ չգտավ, փոխարենը՝ շաբաթներ անց գողոնը իրավապահներին ներկայացրեց, քանզի գողություն կատարելու կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանության Դիլիջանի բաժին:

Կատարվում է քննություն:

Գողության կասկածանքով ոստիկանության Դիլիջանի բաժնում հանգրվանեցին նաեւ դիլիջանցիներ Արմեն Մինասյանը եւ Տիգրան Գեւորգյանը: Գողություն էին արել ծանոթի բնակարանից: Ճշտել էին, որ ծանոթը տանը չէր լինելու: Էլ ի՞նչ էր պետք՝ լուսնյակ գիշեր ու «անտեր» մնացած առանձնատուն: Պատուհանը բացելով՝ մտել էին ու այնտեղից հեռացել օծանելիքներով ու մթերքով:

Այս դեպքով եւս կատարվում է քննություն:

## Տուժած հարեւանություն



*Դիլիջանցի Արման Մխիթարյանը եւ Լեւոն Հովհաննիսյանը լավ հարեւաններ էին: Տարիքային տարբերությունը չէր խանգարում նրանց հարաբերություններին: Երիտասարդ Արմանը տարբեր հարցերում օգնում էր միայնակ, տարեց հարեւանին:*

*Լեւոնը ոգելիցի նկատմամբ թուլություն ուներ: Խմած ժամանակ բարձրաձայն մենախոսում ու հայհոյում էր, որոնց մշտական ունկնդիրն էին Արմանի ընտանիքի անդամները: Այդ հարցի շուրջ Արմանը բազմիցս խոսել էր Լեւոնի հետ:*

*Ամիսներ առաջ Լեւոնը, վերստին խմած, հայհոյում էր: Արմանը գնաց նրան լռեցնելու: Ոտքի հարվածով դուռը բացեց ու ներս մտնելուն պես իր դժգոհությունը հայտնեց: Լեւոնը նրան հակադարձեց՝ շարունակելով անվայելուչ պահվածքը: Ի պատասխան՝ Արմանը խփեց Լեւոնի գլխին, ապա կոտրեց նոթբուքը:*

*Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները:*

*Արման Մխիթարյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 եւ 185 հոդվածներով նախատեսված հանցանք, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:*

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

## Զվարճալի ամփոփագիր

### Ընկերը

Ոստիկանություն զանգած քաղաքացին խնդրում էր, որ շտապ ոստիկան մեկնի. գողություն է կատարվում:

Մեկնած ոստիկաններին հաղորդում է տվել 31-ամյա մի տղամարդ: Ըստ նրա՝ իրեն հյուր եկած ընկերը բազմոցի վրայից գողացել է իր դրամապանակը, որն իր պահանջով վերադարձրել է: Բայց միջադեպը սրանով չի ավարտվել: Ընկերները վիճել են, ծեծել իրար՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

### Հարութը Արմենն էր

Ոստիկանություն է զանգել 57-ամյա մի տղամարդ եւ հայտնել, թե Հարութը իր տնից գողացել է 45 հազար դրամ:

Ոստիկանները պարզել են, որ նրա ծանոթ ոմն Հարութ եկել է նրա տուն, միասին օղի են խմել, եւ, օգտվելով տանտիրոջ՝ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու հանգամանքից, տաբատի գրպանից գողացել է փողն ու հեռացել:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ Հարութը... 33-ամյա Արմենն է:

### Չիպսեր ու «Բելուգա»

Ոստիկանություն հրավիրված 26-ամյա երիտասարդը խոստովանել է, որ դեկտեմբերի 30-ին գյուղի սուպերմարկետից մեկ շիշ «Բելուգա» օղի եւ երեք տուփ չիպս է դրել զամբյուղի մեջ, ցանկացել է գողանալ, սակայն տեսնելով սուպերմարկետի հսկիչներին, իր կամքից անկախ հանգամանքներում գողությունը ավարտին չհասցնելով, զամբյուղը թողել է խանութում եւ հեռացել:



«Բելուգան» Ամանորից առաջ դեռ կարելի է հասկանալ, բա չիպսե՞րը...

Երիտասարդը բաց է թողնվել:

### Ջրատաքացուցիչը կապ չուներ

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ծնկահոդի հրազենային վիրավորումով բուժօգնության է տեղափոխվել 20-ամյա մի տղամարդ:

Պարզվել է, որ մեկի տանը արեւային էներգիայով տաքացվող ջրատաքացուցիչ տեղադրելուց հետո մի աշխատակիցը վերցրել է տանտիրոջ որսորդական հրացանը, փորձել է տեսնել՝ փողի մեջ փամփուշտ կա՞, թե՞ ոչ, եւ պատահաբար կրակել է գործընկերոջ ոտքին:

Կարեւորն այն է, որ միջադեպը տեղի է ունեցել սարքը տեղադրելուց հետո:

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 24-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 62 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը՝ հետախուզվում էր սպանության, 2-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ ծեծի եւ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, 1-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 1-ը՝ կողոպուտի փորձի, 4-ը՝ գողության, 1-ը՝ գողությանը հանցակցելու, 11-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ խարդախության եւ կաշառք տալու, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ առանց հափշտակելու նպատակի՝ ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, 1-ը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու, 1-ը՝ կանխամտածված սնանկության, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելուն հանցակցելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 2-ը՝ առանց իրացնելու նպատակի՝ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ կաշառք ստանալու, 1-ը՝ կաշառք տալու, 1-ը՝ կաշառք տալու փորձի, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 59 ճանապարհատրանսպորտային պատահար. 5 մարդ զոհվել է, 104-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 13 դեպք. 1 մարդ զոհվել է, 12-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

Սկիզբը՝ նախորդ համարում

## Խարդախություն. «ինտելեկտուալ» հանցագործություն

Խարդախներն իրենց նպատակին հասնելու համար օգտագործում են ոչ թե մտացածին խայծ, այլ հենց տուժողի պահանջմունքը, այսինքն՝ նախ փորձում են հասկանալ, թե ինչի կարիք ունի դիմացինը եւ նոր միայն առաջարկում են այդ կարիքը լուծելու ամենահեշտ եւ, իհարկե, ոչ անվարձահատույց միջոցը:

Տարիներ առաջ սկսվեց արտասահմանում աշխատել ցանկացողների հոսքը, եւ, դրան զուգահեռ, ի հայտ եկան բազմաթիվ «հնարամիտներ», ովքեր կեղծ փաստաթղթեր եւ «լավ կապեր» ունենալու պատրանք ստեղծելով՝ խարդախությամբ ահռելի գումար հափշտակեցին դյուրահավատներից: Այլ կերպ ասած՝ եթե ինչ-որ բանի պահանջարկ է լինում, առաջարկը չի ուշանում: Իսկ ի՞նչ է կատարվում, երբ խելամիտ, հասուն մարդիկ հանկարծ սկսում են կուրորեն հավատալ ու վստահել անծանոթին:

Երբ մարդն ինչ-որ բանի խիստ ցանկություն է ունենում, ապա բանականությունն ասես մթագնում է, եւ ամենուր ու ամեն ինչում տեսնում է միայն իր ցանկությունն իրագործելու հնարավորություն: Հենց այդ հոգեբանական օրինաչափությունից էլ օգտվում են հանցագործները:

Սիրահարված մարդն ասես կտրվում է իրականությունից եւ աշխարհը տեսնում է պայծառ գույներով, ինչից արագ օգտվում են անազնիվ անձինք: Պատմությունը վկայում է, որ նման անազնիվների պակաս երբեւէ չի զգացվել: Դժվար է սիրահարված մարդուն ինչ-որ բան համոզել: Նրա բանականությունն ասես նահանջում եւ սպասում է, թե երբ պիտի զգացմունքը սխալ գործի, որ նոր միայն ինչ-որ կերպ մեղմի հնարավոր հետեւանքները:

Խարդախները երբեմն իրենց նպատակին հասնելու համար օգտագործում են բարեգործական ծրագրեր.



սոցիալապես անապահով խավերին օգնելու պատրվակով գումար են հավաքում: Ինչպես հավաստում են հոգեբանները, ամեն մեկը հոգու խորքում իրեն համարում է լավ արարքներ կատարելու ունակ անձ: Սակայն ոչ միշտ է, որ կյանքն այդ թաքնված շնորհը դրսեւորելու հնարավորություն է տալիս: Եվ չի բացառվում, որ այդ հնարավորությունը մարդկանց ընձեռի հենց խարդախը: Այդ իսկ պատճառով, եթե բարի գործ անելու ցանկություն ունենաք, ինքնուրույն նախաձեռնեք: Եթե չեք ցանկանում, որ ձեր անունը հրապարակվի, կարող եք մտերիմ մարդու միջոցով իրականացնել ծրագրերը, բայց միշտ զգոն եղեք:

Երբեմն մարդուն խաբելու համար բավական է միայն սաստիկ զայրացնել, եւ նա պատրաստ կլինի կատարել այն ամենը, ինչ ցանկանում են: Զայրույթից զատ, խարդախները կարող են օգտագործել նաեւ այլ զգացմունքներ՝ տագնապը, հարազատ մարդկանց հանդեպ հոգատարությունը եւ այլն: Նման իրավիճակներում նվազում է մարդու տրամաբանական մտածողությունը, եւ նա ընդունակ է լինում անմիտ, իրեն հաշիվ չտվող արարքներ կատարել: Հիշեք՝ վախը, ատելությունը եւ կարեկցանքը ցանկացած ձեռնարկման համար վատ խորհրդատուներ են: Եթե հանգամանքները ստիպում են պատասխանատու որոշումներ կայացնել, եւ զգում եք, որ բացասական հույզերն ավելի շատ են՝ աշխատեք նախ հանդարտվել, վերականգնել հոգու հավասարակշռությունը, վերլուծեք հնարավոր վարկածները եւ ոչ թե ձեզ մատուցվածը: Այդ ամենից հետո միայն գործի անցեք:

Երազանքը փորձանքի չվերածելու համար խուսափեք ձեր ցանկությունները հրապարակելուց: Փորձեք ի կատար ածել ինքներդ կամ օգտվեք վստահելի անձանց ծառայություններից:

Հիշեք, որ աշխարհում անլուծելի հարց չկա, որ յուրաքանչյուր խնդիր ունի իր լուծումը: Յուրաքանչյուր ոք ինքն է պատասխանատու իր արարքների համար: Երբեք մի՛ փորձեք ձեր հարցերը լուծել այլոց միջոցով, մի՛ փորձեք խնդրի լուծմանը հասնել անօրինական ճանապարհով: Գուցե մի փոքր ավելի ժամանակ ծախսեք, գուցե հուսահատվեք, բայց ամենակարեւորը՝ ինքնուրույն հարթելիս ոչ ձեր նյարդերը կփչացնեք, ոչ նյութական կորուստ կունենաք:

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

## Հանրապետության ճանապարհներին

Յունվարի 26-ին «Իսուզու» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Շիրակի եւ Շարուրի փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Յունվարի 26-ին «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենան Գորիս քաղաքի Արցախյան խճուղում բախվել է «Մերսեդես Բենց C180» մակնիշի ավտոմեքենայի. «Մերսեդես Բենց»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Յունվարի 26-ին Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի 83 կմ-ին իրար են բախվել «ԴԱՖ-105» բեռնատարը եւ «Օպել Աստրա» մակնիշի մեքենան. «Օպել Աստրա»-ի վարորդը տեղում մահացել է, իսկ վեց ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Յունվարի 26-ին «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Մինսկի փողոցում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, ապա վարորդը վրաերթի է ենթարկել երկու հետիոտնի, իսկ մեքենան կողաշրջվել է: Վարորդը եւ հետիոտնը մահացել են, իսկ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Յունվարի 27-ին Ապարան-Երեւան ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «ԿԻԱ Սորենտո» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի ուղեւորուհին տեղում մահացել է, իսկ վարորդներն ու «Տոյոտա»-ի չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Յունվարի 27-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Գյումրիի Տիգրան Մեծի փողոցում վրաերթի է ենթարկել 79-ամյա քաղաքացուհու, որը հիվանդանոցում մահացել է:

■

Յունվարի 27-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Խանջյան փողոցում վրաերթի է ենթարկել 29-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Յունվարի 27-ին Երեւանի Խաչիկ Դաշտենցի փողոցում իրար են բախվել «Օպել», «Նիսան», «Տոյոտա» եւ կայանված «ՎԱԶ-21723» մակնիշի ավտոմեքենաներ: «Նիսան»-ի վարորդը վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Յունվարի 28-ին Մասիս քաղաքի Երեւանյան փողոցում իրար են բախվել «ԲՄՎ-X3» եւ «ՎԱԶ-21140» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-21140»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Յունվարի 28-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Կապան քաղաքի Յ.Ավետիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 65-ամյա քաղաքացուհու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Յունվարի 28-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 126-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Զաֆիրա» եւ «ՎԱԶ-21010» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Յունվարի 29-ին Էջմիածին-Մարգարա ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «Տոյոտա» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի վարորդը եւ 28-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Յունվարի 29-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 36-րդ կմ-ին իրար են բախվել «Միցուբիշի» եւ «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենաներ. «Միցուբիշի»-ի վարորդը եւ յոթ ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

# Առաջին չեկիստը. լեգենդ եւ իրականություն

Սկիզբը` նախորդ համարում

1918 թվականի մարտին Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը Պիտերից տեղափոխվեց Մոսկվա, եւ շուտով շրջանառության մեջ մտավ «Լուբյանկա» բառը. այդ հասցեում էր տեղավորվել Արտակարգ հանձնաժողովը` Ֆելիքս Ձերժինսկու գլխավորությամբ: Հենց այդ շրջանից էլ սկսեցին լեգենդներ հյուսվել նրա գործունեության, աննկուն կամքի, ինչպես եւ «Երկաթյա» մականվան մասին: Ի դեպ, լեգենդ դարձավ նաեւ Ձերժինսկու նշանավոր շինելը, որը, իր իսկ վկայությամբ, առաջին անգամ հագել էր քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ հաճախակի էր ելույթ ունենում Կարմիր բանակի զինվորների առաջ, եւ յուրային դիտվելու խնդիր կար: Իսկ հետագայում շինելը դարձավ կերպարի անբաժան մասը:

Հետաքրքիր պատմություն ունի նաեւ «Երկաթյա» մականունը:

Արտակարգ հանձնաժողովը տեղավորված էր նախկին «Խարիսխ» ապահովագրական ընկերության մասնաշենքում, որի երկրորդ հարկի անկյունային ընդարձակ ու լուսավոր սրահը Ձերժինսկու աշխատասենյակն էր: Այնտեղ էր գտնվում նաեւ նախկին տերերից մնացած հսկայական մետաղյա պահարանը: Ժամանակակիցները պատմում են, որ մի անգամ, ուշ երեկոյան, պատուհանից նռնակ են նետում սենյակ: Ձերժինսկին, որն այդ պահին աշխատում էր գրասեղանի մոտ, խուճապի չի մատնվում, վեր է թռչում, վազքով հասնում մետաղյա սեյֆին ու փակվում ներսում: Նռնակի պայթյունից աշխատասենյակի պատուհանները փշրվում են, ջարդուփշուր է լինում կահույքը, ավերվում են պատերը, սակայն սեյֆում պատսպարված Ձերժինսկին քերծվածք անգամ չի ստանում: Հենց այս միջադեպից հետո զինակիցները նրան կոչում են «Երկաթյա Ֆելիքս», մականուն, որը վկայում էր նրա անխոցելիությունն ու աներեր հեղափոխական կամքը...



1926 թվականի հուլիսի 20-ին Ֆելիքս Ձերժինսկու անսպասելի մահը բազում ասեկոսեների ու ֆանտաստիկ ենթադրությունների առիթ տվեց: Այդ օրը նա ելույթ էր ունենում կուսակցության Կենտկոմի պլենումում եւ հենց ելույթի պահին կտրուկ շարժումով ձեռքը տանում է սրտին: Պլենումի մասնակիցները դա որպես հռետորական ժեստ են ընդունում, իսկ Ձերժինսկին ուժերի լարումով ավարտում է ելույթը, անցնում հանգստի սենյակ ու պառկում բազմոցին: Մի փոքր ուշ-քի գալով` գնում է Կրեմլի իր բնակարանը, որտեղ վիճակը կրկին վատանում է: Բժիշկ Վուլմանը նրան կամֆորա է սրսկում, բայց արդեն ուշ էր. վրա էր հասել ակնթարթային մահը:

Ձերժինսկու առեղծվածային մահը հասարակության մեջ եւ հեղափոխական առաջնորդների շրջանում նրան թունավորելու մասին խոսակցությունների առիթ է տալիս: Սպանության վարկածը հատկապես հիմնավորում էին Ստալինի ու Ձերժինսկու լարված հարաբերություններով: «Ժողովուրդների հայրը» իր ուժային կենտրոնն էր ստեղծում, եւ «լենինյան գվարդիայի» անդամները խանգարում էին նրան: Հայտնի էին նաեւ Ստալինի ու Ձերժինսկու տարակարծությունները` կապված տնտեսական նոր քաղաքականության հետ:

Ձերժինսկու կինը իր հուշերում վկայել է, թե ինչպես է մի անգամ զայրացած «Երկաթե Ֆելիքսը» բղավել. «Ստալինը տնտեսությունից ոչինչ չի հասկանում»:

Ասեկոսեների խափանմանը չնպաստեց նաեւ Ձերժինսկու դիակի հերձումը: Հայտնի է, որ նա տառապում էր տուբերկուլյոզով, սակայն հերձմամբ տուբերկուլյոզի նշաններ չհայտնաբերվեցին: Ուշագրավ է, որ չէր հետազոտվել նրա ուղեղը, առանց որի անհնար է ճշգրիտ ախտորոշել:

Ճիշտ է, դեռեւս կենդանության օրոք բժիշկները Ձերժինսկու մոտ ուժեղ ստենոկարդիա էին հայտնաբերել, որն ուղեկցվում էր անոթների աթերոսկլերոզով ու շնչառական խախտումներով, սակայն, ինչպես այն ժամանակ, այնպես էլ մինչ օրս, Ձերժինսկու մահվան պաշտոնապես ընդունված պատճառի` սրտի կաթվածի հետ դիտարկվում է նաեւ թունավորման վարկածը:

# Դահիճը

Սկիզբը` նախորդ համարում

Յատուկ ստորաբաժանման անդամներին մեծ անախորժություններ էին պատճառում մահապարտները, որոնք գնդակահարությունից առաջ սկսում էին գովերգել խորհրդային հասարակարգը եւ Ստալինին: Գնդակահարողների մեջ սկսում էին կասկածներ առաջանալ` արդյո՞ք գնդակահարում են «ժողովրդի թշնամիների»: Միաժամանակ, ստալինյան բռնությունների ուժգնացման հետ, գնդակահարվածների ցուցակում հայտնվում էին ԽՍՅՄ ղեկավար դեմքեր` Միխայիլ Տուխաչեւսկին, Իոնա Յակիրը, Բորիս Ֆելդմանը եւ այլք: Նրանց մեծ մասին այն աշխարհ էր ուղարկել Բլոխինը:

Այս կամ այն նշանավոր դեմքի գնդակահարությանը ներկա են եղել Գերագույն դատարանի Ռազմական կոլեգիայի նախագահ Ուլրիխը եւ ԽՍՅՄ գլխավոր դատախազ Վիշինսկին: Գնդակահարություններին ներկա լինելուց չէր խորշում նաեւ Եժովը: Երբ գնդակահարում էին «երկաթյա ժողկոմի» մտերիմ Յակովլեւին, նա անսպասելի հայտարարում է Եժովին. «Նիկոլայ Իվանովիչ, քո աչքերից երեւում է, որ ինձ խղճում ես»: Եժովը մի պահ շփոթվում է, սակայն արագ իրեն տիրապետում է եւ հրամայում իրականացնել մահապատիժը:

Երբ գնդակահարում էին նախկին ՆԳԺ կոմիսար Յագոդային, Եժովը հրամայում է նրան վերջինը գնդակահարել, որպեսզի նա տեսնի մյուսների մահը եւ տանջվի: Ավելին, Յագոդային գնդակահարելուց առաջ Եժովը հրամայում է ծեծել նրան:

Մարդկանց զանգվածային մահապատժի ենթարկելով` Բլոխինը եւս կարող էր հայտնվել մահապարտների ցուցակում: Սակայն բարձրագույն ղեկավարությունը, հատկապես Ստալինը, գնահատում էին նրա «անձնուրաց աշխատանքը»:

Եժովին փոխարինել էր նոր ժողովրդական կոմիսար Լավրենտի Բերիան, որը բարեկամական հարաբերություններ էր ունեցել գնդակահարված Յագոդայի ու Բուլանովի հետ, ուստի որոշում է ազատվել գլխավոր դահճից: Կազմվում է համապատասխան գործ` այն ժամանակներին հատուկ մեղադրանքներով` լրտեսություն տարբեր պետությունների օգտին, հակակուսակցական գործունեություն եւ այլն: Բլոխինի ձերբակալությանը պետք է հավանություն տար «ժողովուրդների առաջնորդը», սակայն Ստալինը մերժում է: 1953 թ. Բերիան այդ մասին գրում է. «Ստալինը ինձ հետ չհամաձայնեց` հայտարարելով, որ նման մարդկանց պետք չէ բանտ նստեցնել, քանի որ նրանք կատարում են սեւ աշխատանք: Կանչեց իր պահակախմբի պետ գեներալ Վլասիկին ու հարցրեց` Բլոխինը մասնակցո՞ւմ է դատավճիռների կատարմանը, եւ պե՞տք է արդյոք նրան ձերբակալել: Վլասիկը պատասխանեց, որ մասնակցում է, նրա հետ մասնակցում է իր օգնական Ռակովը եւ դրական արտահայտվեց Բլոխինի մասին»: Այս դեպքից հետո Բերիան չի համարձակվում ձեռք տալ Բլոխինին:



Մահապարտներին հիմնականում բերում էին Բլոխինի մոտ, սակայն լինում էին դեպքեր, երբ նա անձամբ էր գնում հերթական զոհի հետեւից: Այդպես եղավ կուսակցական գործիչ Ռոբերտ Էյխեի հետ:

Էյխեին ձերբակալել էին 1938 թ. ապրիլի վերջին եւ մեղադրել «լատիշական ֆաշիստական կազմակերպություն» հիմնելու մեջ: Երբ Ստալինն արդեն մահացել էր, ՆԳԺԿ-ի 1-ին հատուկ բաժնի պետ Լեոնիդ Բաշկատովը վկայում էր. «Իմ աչքի առաջ, Բերիայի հրահանգով, Ռոդոսը եւ Էսաուլովը ռետինե մահակներով դաժանորեն ծեծում էին Էյխեին, որը հարվածներից ընկել էր, սակայն շարունակում էին խփել նաեւ ընկած ժամանակ, եւ Բերիան շարունակ նույն հարցն էր տալիս. «Խոստովանո՞ւմ ես, որ դու լրտես ես»: Էյխեն պատասխանում էր. «Ոչ, չեմ խոստովանում»: Ապա Ռոդոսն ու Էսաուլովը վերսկսում էին ծեծը: Ծեծից հետո, երբ Բերիան համոզվեց, որ Էյխեից չի կարող ստանալ լրտես լինելու խոստովանություն, հրամայեց տանել գնդակահարելու»:

1940 թ. փետրվարին Վասիլի Բլոխինը անձամբ այն աշխարհ ուղարկեց «երկաթյա ժողկոմ» Եժովին: Նա 1939 թ. գարնանից ձերբակալված էր եւ հերքում էր բոլոր մեղադրանքները, բացի մեկից. «Ես մաքրել եմ 14000 չեկիստի, սակայն իմ ահռելի մեղքն այն է, որ նրանց քիչ եմ մաքրել»: Իր վերջին ճառում Եժովն ասում է. «Նախաքննության ժամանակ ես ասել եմ, որ լրտես չեմ, ահաբեկիչ չեմ, սակայն ինձ չեն հավատացել եւ իմ նկատմամբ կիրառել են սարսափելի ծեծ: Ես 25 տարվա կուսակցական կյանքի ընթացքում ազնվորեն պայքարել եմ թշնամիների դեմ եւ ոչնչացրել: Չեմ ժխտում, որ հարբեցողությամբ եմ զբաղվել, սակայն աշխատել եմ ինչպես եզ: Եթե ցանկանայի ահաբեկչական գործողություն իրականացնել կառավարության որեւէ անդամի դեմ, ապա այդ նպատակի համար ոչ ոքի չէի հավաքագրի, այլ կօգտագործեի տեխնիկա»: ՆԳԺկ-ի աշխատակից, հետախույզ եւ դիվերսանտ Պավել Սուդոպլատովի վկայությամբ` «Երբ տանում էին գնդակահարության, Եժովը «Ինտերնացիոնալ» էր երգում»:

***Շարունակելի***

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՅԱԿՅԱՆԸ**

# Հանցագործություններ տնտեսական գործունեության դեմ

***Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից են օրինական ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը, ապօրինի ձեռնարկատիրությունը, կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, փողերի լվացումը, մաքսանենգությունը, յուրացումը եւ այլն:***

***Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները բնութագրում եւ համապատասխան պատիժ են սահմանում քրեական օրենսգրքի 21-րդ եւ 22-րդ գլուխներում ընդգրկված հոդվածները:***

***Այս շարքի հանցագործությունները բացահայտում, կանխում եւ նախականխում է գլխավորապես ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունը:***



Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է ապօրինի ձեռնարկատիրությունը, այն է՝ առանց պետական գրանցման կամ առանց հատուկ թույլտվության լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը՝ զուգորդված անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով: Պատիժը սահմանում է քրեական օրենսգրքի 188 հոդվածը:

Հունվարի 10-ին ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, պարզեցին, որ Բերդ քաղաքի մի բնակիչ իր առանձնատան առաջին հարկում զբաղվում է փայտամշակման անօրինական գործունեությամբ: Զննությամբ նշված տարածքից հայտնաբերվեցին կիսաշեն աթոռներ, փայտյա դետալներ, կահույքի պատրաստման տարատեսակ գործիքներ եւ այլն:

Նույն օրը ապօրինի ձեռնարկատիրության դեպք բացահայտեցին ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները: Իրացնելով օպերատիվ տվյալները՝ ոստիկանները Գանձաքար գյուղում հայտնաբերեցին փայտամշակման ապօրինի արտադրամաս, որը պատկանում էր գյուղի բնակիչներից մեկին: Զննությամբ հայտնաբերվեցին հաճարենու 200 գերան, կողահատ տախտակներ, փայտամշակման հաստոց եւ այլ գործիքներ:

Ապօրինի ձեռնարկատիրությամբ էր զբաղվում նաեւ Իջեւան քաղաքի մի բնակիչ: Քաղաքի նախկին գորգագործական կոմբինատի տարածքում ապօրինի գործող նրա արտադրամասում ոստիկանները հայտնաբերեցին փայտամշակման հաստոցներ, գործիքներ, փայտանյութ: Գետահովիտ գյուղի մի բնակչի ապօրինի գործող փայտամշակման արտադրամասում եւս հայտնաբերվեցին հաստոցներ, կողահատ տախտակներ, վառելափայտ:

Հունվարի 10-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում դատախազությունից ստացված գրության ստուգման արդյունքում պարզվել է, որ սահմանափակ պատասխանատվությամբ երկու ընկերություն գնման ընթացակարգի շրջանակներում թույլ են տվել ապօրինի հակամրցակցային գործողություններ: Այն է՝ տնտեսվարող այլ սուբյեկտներին նշված գործընթացից դուրս մղելու նպատակով ներկայացրել են անմրցունակ եւ անհավանական ցածր գներ, ինչի շնորհիվ մրցույթում հաղթող են ճանաչվել, իսկ հետագայում հրաժարվել են իրենց ներկայացրած գներով պայմանագրեր կնքելուց:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է նաեւ դրամանենգությունը:

Հունվարի 13-ին ՊՊԾ գնդի ոստիկանները Հանրապետության հրապարակից ոստիկանության Կենտրոնական բաժին ներկայացրին Իրանի մի քաղաքացու: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ մայրաքաղաքի բնակիչ Պետրոս Պ.-ն, փոխանակման նպատակով, իրանցուն տվել էր կեղծ քսան հազար դրամանոց՝ նրանից վերցնելով պարսկական թուման:

Հունվարի 14-ին դրամանենգության դեպք գրանցվեց նաեւ ոստիկանության Արաբկիրի բաժնում: Ահազանգը «Ամերիաբանկ»-ից էր: Հայտնում էին, որ քաղաքացին իրենց մասնաճյուղերից մեկում ցանկացել է փոխանակել 100-դոլարանոց, որը, ըստ բանկի կողմից տրված ակտի, կեղծ է: Ոստիկանություն հրավիրված քաղաքացին հայտնեց, որ թղթադրամը ձեռք է բերել Հնդկաստանի Հանրապետության քաղաքացուց:

Տնտեսության, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է յուրացումը:

2018 թ. ութ ամիսների ընթացքում՝ մայիսի 8-ից դեկտեմբերի վերջ, ոստիկանության աշխատակիցների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պետական բյուջե է վերադարձվել ավելի քան 708 միլիոն դրամ: Պետբյուջե վերադարձված գումարը հիմնականում գոյացել է պետական, համայնքային մարմիններում եւ մասնավոր ընկերություններում կատարված յուրացումների եւ չարաշահման դեպքերի բացահայտման արդյունքում:

Տարեվերջին ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցները յուրացումների ու չարաշահումների դեպքեր բացահայտեցին հանրապետության մի շարք մարզերում:

Արարատի մարզի Արեւաբույր գյուղի նախկին ղեկավարը ապօրինությունների արդյունքում չորսուկես միլիոն դրամ էր յուրացրել: Շիրակի մարզի Գոգահովիտ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը յուրացրել էր երկու միլիոն դրամ, իսկ Արմավիրի մարզի Դաշտ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենը՝ երեքուկես միլիոն դրամ: Երկու տնօրեններն էլ դպրոցում աշխատանքի էին ձեւակերպել մարդկանց, որոնք իրականում աշխատանքի չէին ներկայացել իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձերը տնօրենները յուրացրել էին:

Տասնվեց միլիոն դրամ էր յուրացրել Աբովյան քաղաքի մշակութային կենտրոններից մեկի տնօրենը. նա քաղաքացիների տված վարձավճարները մուտքագրել էր... սեփական գրպանը:

Հունվարի 13-ին ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողները Բագրատաշենի սահմանային անցակետում հայտնաբերեցին առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելու մեղադրանքով 2017 թվականից հետախուզման մեջ գտնվող Նելլի Հարությունյանին: Զբաղեցնելով Եղեգնաձորի բանկերից մեկի կառավարչի պաշտոնը՝ նա 2016 թ. հունիսից մինչեւ 2017 թ. հունիսը բանկոմատի լիցքավորման եւ լիցքաթափման գործընթացներն իրականացնելիս յուրացրել էր 42 միլիոն 316 հազար դրամ:

Որպես ամփոփում՝ նշենք՝ տնտեսության, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները ոչ միայն օրենքի, նաեւ պետության դեմ են, որովհետեւ, հատկապես յուրացնողները, հիմնականում պաշտոնեական լիազորություններով օժտված անձինք են, մեծ ու փոքր պաշտոնյաներ, ու նրանց արարքով ինչ-որ տեղ խախտվում է պետական ինստիտուտների, տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ վստահությունը:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# «Կոնյակասերը»



*Հունվարի 5-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Անհայտ անձը Վաղարշյան փողոցի սուպերմարկետից գողացել էր թանկարժեք կոնյակ: Սուպերմարկետին պատճառվել էր 130 հազար դրամի վնաս:*

*Արաբկիրի ոստիկանները ձեռնարկեցին միջոցառումներ՝ գողությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ: Այդ ընթացքում ոստիկանության տարածքային տարբեր ստորաբաժանումներում եւս ալկոհոլային խմիչքների գողության վերաբերյալ հաղորդումներ էին ընդունվում: Թիրախում սուպերմարկետներն ու խանութներն էին: Գողանում էին թանկարժեք խմիչքներ: Վարկած կար, որ գողությունները կատարում է նույն անձը:*

*Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Արաբկիրի ոստիկաններին հաջողվեց պարզել Վաղարշյան փողոցի սուպերմարկետից կոնյակ գողացած անձի ինքնությունը. Կապանում հաշվառված, 56-ամյա Ռուդիկ Բաբայանն էր, որը մայրաքաղաքում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին:*

*Նմանօրինակ գողությունների միջեւ կապի վերաբերյալ ոստիկանների վարկածը հաստատվեց: Պարզվեց, որ Ռուդիկ Բաբայանը կատարել էր մի քանի տասնյակ գողություն Երեւանի տարբեր վարչական շրջաններում եւ հանրապետության գրեթե բոլոր մարզերում:*

*Հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:*

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# Ծեծկռտուք «Վերնիսաժում»



Հունվարի 22-ին հիվանդանոցից ոստիկանության Կենտրոնական բաժին հաղորդում ստացվեց, որ բուժօգնության են դիմել մարմնական վնասվածքներով 16 եւ 17-ամյա չորս դպրոցականներ: Նրանք հայտնել են, որ վնասվածքները ստացել են ընկնելու հետեւանքով, «Վերնիսաժ» տոնավաճառում:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները պարզել են, որ Չայկովսկու փողոցում նշված անձինք վիճաբանել են 18 եւ 19-ամյա պատանիների հետ, ձեռքերով եւ ոտքերով փոխադարձ հարվածներ են հասցրել իրար՝ պատճառելով վնասվածքներ:

Պատանիներից մեկը Անդրանիկի փողոցից ներկայացվել է ոստիկանություն:

Ձեռնարկվում են միջոցառումներ միջադեպի բոլոր հանգամանքները պարզելու եւ մյուս մասնակիցներին հայտնաբերելու ուղղությամբ:

Նախապատրաստվում են նյութեր:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Գողացված մեքենան հայտնաբերվեց

**Հունվարի 11-ին, օրը ցերեկով, Շենգավիթ վարչական շրջանում մեքենա էին առեւանգել: Եղբայրության փողոցի շենքերից մեկի մոտ «Օպել» մակնիշի մեքենայի տերը, մեքենայի դռները բաց, շարժիչը գործարկված թողնելով՝ մի քանի րոպեով տուն էր մտել, այդ ընթացքում էլ կատարվել էր գողությունը:**

**Տեսնելով, որ մեքենան չկա, տուժողը 1-02 էր զանգել:**

**Ոստիկանները ձեռնարկեցին անհետաձգելի որոնողական աշխատանքներ: Կողմնորոշումներ ուղարկվեցին ոստիկանության բոլոր ստորաբաժանումներին: Ոստիկանության արտաքին եւ օպերատիվ ծառայություններից զատ, բացահայտման**



**աշխատանքներին կարող էին նպաստել նաեւ փողոցների տեսահսկող սարքերը, բայց գործը դրան չհասավ: Մեքենան հայտնաբերվեց բացառապես ոստիկանության ծառայողների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ:**

**Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, համագործակցելով ճանապարհային ոստիկանության, պարեկապահակետային գնդի եւ Մալաթիայի բաժնի ծառայողների հետ, Սեբաստիայի փողոցում հայտնաբերեցին առեւանգված «Օպել»-ը եւ վարորդին, մեքենայով հանդերձ, բերման ենթարկեցին ոստիկանության Շենգավիթի բաժին. Վերին Շենգավիթի բնակիչ Արսեն Բադալյանն էր:**

**Նշենք, որ նախկինում գողության, գողության փորձի, կողոպուտի, կողոպուտի փորձի մեղադրանքով դատապարտված Արսեն Բադալյանը քրեակատարողական հիմնարկից 2018 թ. նոյեմբերին էր ազատվել համաներման ակտով:**

**Հետեւություն չէր արել, եւ հանցավոր ուղին նրան կրկին ոստիկանություն բերեց:**

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Սիրուհու ընկերուհու սպանությունը



Սպանությունից 5 տարի անց դատավճիռ կայացվեց Ռոբերտ Հ.-ի գործով: Նախաքննական մարմինը նրան մեղադրանք էր առաջադրել շահադիտական դրդումներով սպանության համար: Դեպքի կատարման պահին Ռոբերտը քսաներկու տարեկան էր:

2013 թ. հոկտեմբերի 24-ին Ռոբերտ Հ.-ն, ըստ մեղադրանքի, գտնվել է Երեւանի Դավիթ Մալյան փողոցի շենքերից մեկի բնակչուհի Ա.-ի տանը եւ վիճաբանել է նրա հետ, այդ ընթացքում սուր-կտրող-ծակող գործիքով հարվածներ է հասցրել նրան, ինչի հետեւանքով Ա.-ն մահացել է: Դրանից հետո, ըստ մեղադրանքի, Ռոբերտը տիրացել է բնակարանում եղած 80 հազար դրամին, ոսկյա զարդերին ու դիմել փախուստի:

Սպանված Ա.-ն Ռոբերտի սիրուհու ընկերուհին էր: Ռոբերտը սիրային կապի մեջ էր իրենից տարիքով բավական մեծ կնոջ հետ, տուժողը եւս նրանից մեծ էր:

Ըստ մեղադրանքի՝ տուժողի մարմնին հասցվել էր դանակի մոտ տասնինը հարված: Ռոբերտը նաեւ բարձ էր դրել տուժողի դեմքին՝ ցանկանալով շնչահեղձ անել նրան:

Ռոբերտ Հ.-ն իրեն մեղավոր չի ճանաչել: Պաշտպանական կողմի դիրքորոշման համաձայն՝ նա կատարել էր սպանություն՝ գտնվելով հոգեկան խիստ հուզմունքի վիճակում:

Գործի նախաքննության ընթացքում երկու անգամ անցկացվել է դատահոգեբանական փորձաքննություն, տրվել են իրարամերժ եզրակացություններ:

Ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ընթացքում եւս երկու անգամ նշանակվել է համձնաժողովային դատահոգեբանական փորձաքննություն: Եվ դարձյալ ստացվել են իրար հակասող եզրակացություններ: Հոգեբաններից մեկը համարել է, որ առկա է եղել աֆեկտի վիճակ, մյուսը արձանագրել է, թե աֆեկտի վիճակ չի եղել:

Հենց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցին այդպես էլ հստակ պատասխան չտված դատահոգեբանական փորձաքննությունների պատճառով գործի քննությունը ձգձգվել է: Ի վերջո, հարցի պատասխանը տվել է դատարանը՝ գործով ձեռք բերված ապացույցների համադրությամբ:

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը գործի քննության արդյունքում եզրահանգել է, որ դեպքի պահին Ռոբերտ Հ.-ն չի գտնվել հոգեկան խիստ հուզմունքի վիճակում:

Ըստ մեղադրանքի կողմի՝ Ռոբերտ Հ.-ն, ունենալով պարտքեր, դեպքի օրը գնացել է տուժող Ա.-ի տուն՝ փող կամ ոսկյա զարդ վերցնելու: Սակայն Ա.-ն մերժել է, վիճաբանել են, ինչի ընթացքում էլ զայրացած Ռոբերտը դանակի հարվածներով սպանել է նրան: Ընդ որում՝ հարվածներից դանակը կոտրվել է, Ռոբերտը խոհանոցից նոր դանակ է վերցրել եւ շարունակել հարվածել...

Ամբաստանյալի պնդմամբ՝ իր այցելության ժամանակ Ա.-ն անպարկեշտ առաջարկություն էր արել իրեն, իսկ երբ ինքը մերժել է, նա հայհոյական արտահայտություններ է արել, ինչից ինքն ընկել է հոգեկան խիստ հուզմունքի վիճակի մեջ ու չի գիտակցել, թե ինչ է անում:

Դատարանը Ռոբերտ Հ.-ին մեղավոր է ճանաչել դիտավորյալ սպանության համար եւ դատապարտել է 10 տարի ազատազրկման: Ռոբերտ Հ.-ից հօգուտ տուժողի իրավահաջորդին կբռնագանձվի 1 միլիոն դրամ՝ որպես հուղարկավորության ծախսերի հատուցում:

Գոհար ՔԱԼԱՇՅԱՆ

# Ավազակը հայտնաբերվեց



Հունվարի 25-ին ոստիկանության Արարատի բաժնում տեղեկություններ ստացվեցին, որ նախորդ օրը, ժամը 22-ի սահմաններում, Արարատ քաղաքի Արարատյան զանգվածի շենքերից մեկում ավազակային հարձակում էր կատարվել: Դիմակավորված տղամարդը թակել էր բնակարաններից մեկի դուռը, եւ երբ տանտիրուհին բացել էր, դանակի սպառնալիքով պահանջել էր փող եւ ոսկյա զարդեր: Կինը դիմադրել էր, օգնություն կանչել, ինչից հետո տղամարդը դիմել էր փախուստի:

Ստուգվեց օպերատիվ տեղեկությունների իսկությունը: Ինչպես ավազակային հարձակման, այնպես էլ կասկածյալի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու եւ ձեռք բերածի հետ համադրելու նպատակով ոստիկաններն Արարատյան զանգված մեկնեցին:

Ձեռնարկված որոնողական աշխատանքների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ դիմակավորը Արարատի բնակիչ Դավիթ Գասպարյանն է: Դեպքից ժամեր անց նա իր բնակության վայրից բերման ենթարկվեց ոստիկանության Արարատի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

# Չկամության ցուցադրություն



Կոտայքի մարզի գյուղերից մեկում են բնակվում հորեղբորորդիներ Սեդրակ եւ Սիմոն Ասատրյանները: Հարեւանությամբ ապրող հարազատները տարիների պատմություն ունեցող վեճ ունեն:

Ընդհանուր օգտագործման ճանապարհը փաստաթղթով Սեդրակի անունով է գրանցված: Նրանց հայրերը ժամանակին չէին մտածել, որ որդիներն իրենցից հետո լեզու չեն գտնի, ու հողակտորը մշտական վեճերի պատճառ կդառնա: Համաձայնության էին եկել, որ այն գրանցվի իրենցից մեկի անունով, իրականում՝ մնալով որպես ընդհանուր օգտագործման ճանապարհ:

Հանգուցյալ ծնողների որոշումը, սակայն, որդիների, հատկապես՝ Սեդրակի համար ոչինչ չէր նշանակում: Կամ ծնողները ժամանակին լավ չէին բացատրել «Սիրիր մերձավորիդ» պատվիրանի խորհուրդը, կամ նրանք էլ մեծանալով՝ «ինքնակրթությամբ» չէին զբաղվել:

Տարակարծությունները ու անհամաձայնությունը լուծելու արդյունավետ միջոցը երբեք հանցավոր արարքը չէ, այնինչ դուռ-դռան ազգականներն այդ միջոցն ընտրեցին:

Հունվարի 17-ի առավոտյան Սեդրակը բակում ձյուն էր մաքրում, երբ իր մաքրած վիճահարույց ճանապարհին հայտնվեց Սիմոնի «Օպել»-ը: Կանգնեցրեց մեքենան, զայրույթը, բահի տեսքով, նախ մեքենայի վրա թափեց: Ու սկսվեց...

Հանգիստ խոսելու վրա ժամանակ չկորցրին, միանգամից «պատերազմական» գործողությունների անցան: Գոռգոռացին, հայհոյեցին, քաշքշեցին...

Կռիվը հօգուտ ո՞ւմ կավարտվեր կամ ո՞վ էր «ճիշտը»՝ մնաց հարցի իններորդ կողմը, որովհետեւ Սեդրակը բահով խփեց Սիմոնի գլխին, ու նա ուշագնաց տապալվեց...

Բարեբախտաբար, «շտապօգնության» բրիգադն առաջին օգնությունը ժամանակին ցուցաբերեց, հետո արդեն Սիմոն Ասատրյանին տեղափոխեցին հիվանդանոց, որտեղից էլ ահազանգ հնչեց ոստիկանություն:

Թե հետո «իմ»-ն ու «քո»-ն ինչպես են որոշելու, մի թիզ հողը որքան է շարունակելու թշնամացնել հորեղբորորդիներին, կամ չարությունն ու չկամությունը ինչքան են կառավարելու նրանց՝ ցույց կտա ժամանակը: Մեծ մարդիկ են, կամ, ի վերջո, կհասկանան մերձավորին սիրելու խորհուրդը, կամ...

Դատաբժշկական փորձաքննությունը Սիմոն Ասատրյանի առողջությանը պատճառված վնասը որակեց ծանր: Իսկ նախաքննական մարմինը Սեդրակ Ասատրյանի արարքը որակեց քրեական օրենսգրքի 112 հոդվածի հատկանիշներով:

Փաստով քննություն է կատարվում:

Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Վեճ՝ դանակով



Հունվարի 23-ին ոստիկանության Մարտունու բաժնում հիվանդանոցից ահազանգ ստացվեց. պարանոցի կտրած արնահոսող վերքով մի տղամարդ էր բժշկական կենտրոն տեղափոխվել:

Քաղաքացին հայտնել էր, թե վնասվածքը ստացել է ընկնելու հետեւանքով: Հայտարարություն, որը ոչ բժիշկներին, ոչ էլ իրավապահներին հավատ չէր ներշնչել:

Տղամարդը իր տնից էր հիվանդանոց տեղափոխվել:

Հանցագործության հետքերը, գործի համար նշանակություն ունեցող առարկաներ հայտնաբերելու, նաեւ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով ոստիկանները տանը համապատասխան ուսումնասիրություններ կատարեցին: Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ու Մարտունու բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում այլ բան պարզվեց: Տուժողը մարմնական վնասվածքը ստացել էր ոչ թե ընկնելու հետեւանքով, այլ՝ դանակահարության: Կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել էր ծանոթի՝ Մարտունու բնակիչ Նվեր Գրիգորյանի հետ, որը դանակով խփել էր պարանոցին:

Դեպքից ժամեր անց, հարազատների հետ տարված բացատրական աշխատանքների արդյունքում, Նվեր Գրիգորյանը ներկայացավ ոստիկանության Մարտունու բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Գողացել էին խոտհնձիչներ



*Հունվարի 15-ին սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից մեկի տնօրենը ոստիկանությունում հաղորդում է տվել, որ 2018 թվականի նոյեմբերից մինչեւ 2019 թվականի հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում ընկերության պահեստից գողացել են 10-12 խոտհնձիչ մեքենա, դրանց կտրիչներն ու անիվները:*

*Ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողոնի մի մասը գտնվում է Մեծամոր բնակիչ Վանյա Գ.-ի տան նկուղում: Նա բացատրական աշխատանքների շնորհիվ ներկայացրել է երկու խոտհնձիչը եւ պահեստամասեր ու հայտարարել, որ դրանք իրեն տուն է բերել Գեւորգ Ն.-ն:*

*Գեւորգ Ն.-ն, գողության կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանություն եւ խոստովանեց:*

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

# Տասնյակ գողություններ էին արել



Հունվարի 21-ին մի նորհաճնցի ոստիկանության Նոր Հաճընի բաժանմունքում հաղորդում է տվել, որ հունվարի 20-ից 21-ն ընկած ժամանակահատվածում գողացել են շենքի բակում կայանված իր «ՎԱԶ-2106»-ի մեքենայի էլեկտրական մարտկոցը:

Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության, Կոտայքի եւ Նաիրիի բաժինների ծառայողները Երեւան քաղաքի Ծատուրյան փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Նաիրիի բաժին բերման են ենթարկել 30-ամյա Կարեն Շմավոնյանին, 22-ամյա Կարապետ Վարդանյանին եւ 30-ամյա Արարատ Մանուկյանին:

Նրանք խոստովանել են, որ նշված գողությունը արել են իրենք: Միաժամանակ հայտնել են, որ հանրապետության տարբեր բնակավայրերում կատարել են մի քանի տասնյակ գողություններ:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

